

ցընէ, կ'ըսէ Լալայեան, եւ երբ ան բնական կերպով սատկի, տէրն անոր մխիթարանք մը տալու նպատակով՝ կ'երթայ անոր մօտ եւ կ'ըսէ: «Մեր աղ ու հացը քե խալալ հընի»: Բորչալուի⁷⁶ հաւատքով՝ «հարինքի հրեշտակները» (հոգեհոտներ, գրողներ) երբ մէկու մը հոգին առնելու գան, սարսափով խոյս կու տան սեւ շուներէ եւ սեւ կատուներէ: Ինչպէս կը տեսնուի հոս բոլորովին ակնյայտնի է շներու մեռելները պաշտպանելու հոգը դերը: Վասպուրականցիներու⁷⁷ համաձայն, «եթէ շունը ոռնում է», կ'ըսէ Ն. Լալայեան, «ասում են թէ տանից մինը մեռնելու է, որովհետեւ շունը տեսել է գրողին, դրա համար էլ սկսել է ոռնալ. եւ որպէս զի այդ դժբախտութեան առաջն առնեն» շղուական մը կը շրջեն: Նոյն անպաշտութիւնը կար նաեւ Կեսարացիներու, Կիւրինցիներու եւ Մանիսացիներու քով: «Շունը երբ սուր ձայն հանէ», կ'ըսէին Սղերդցիները, «հոգեհոտ հրեշտակ կը տեսնէ»: Եւ չարագուշակ շունը փողոցէն կը փնտէին՝ «պէլադ քեզի» շնչելով: Իսկ Բարերդցիին իր դրացիներուն նման խրատ կու տար. «Երբ շուները ոռնան, մահտարածամը կը գուժեն. ոտքի աման մը չըջէ որ ձայնը կտրի»⁷⁸:

Ժողովրդական սոյն հաւատալիքներուն զուգակշիռները Միջին Դարու հայ մատենագիրներուն քով ալ կարելի է գտնել: Ուշագրաւ կը նկատենք Արրահամ Քահանայ Կ. Պոլսեցւոյ⁷⁹ հաղորդած փոփոխակը. «Յորժամ (շուն) իշուն ձայնն լսէ որ կու զրուայ, ինքն այլ ոռնայ եւ գէշ ձայն ածէ. ասեն ոմանք թէ շունն սատանան կու տեսնէ վասն այն կու ոռնայ. եւ էշն այլ կու տեսանէ զսատանայ,

վասն այն կու զուայ: Յորժամ շունն ոռնայ, էշն իմանայ որ ետես զսատանայ. եւ յորժամ էշն զուայ, շունն իմանայ որ երեւումնք տեսաւ»: Հոս յիշուած սատանան կը նոյնանայ վերն յառաջ բերուած կտորներու կրողին, հոգեհոտ հրեշտակներուն հետ. եւ արդէն յաճախ կը հաւատացուի, որ սատանան հոգեհոտի պաշտօնով կը մերձենայ մարդկան, ինչպէս որ մեր նախորդ քննութիւններուն մէջ տեսանք⁸⁰: Մովսէս Կաղանկատուացւոյ⁸¹ քով դէպք մը կը պատմուի, ուր շունն առաջնորդի պաշտօն կը կատարէ դէպի անդէնի աշխարհը. երկիրը չ'ընդունիր չարագործ Մահմեդի դին. շուն մ'ալ կը թաղեն հետը, եւ միայն այս անգամ դին կը մնայ հողին տակ. «Երեցս թաղեալ (Մահմեդը) վերընկէց լինէր եւ երկիր ո'չ ընդունէր զնորա մարմինն: Ապա կարեալ շուն մի շամփրեցին ընդ Մահմէտն եւ սյնպէս ծածկեաց երկիր զչարն զայն»: Նոյն գաղափարներու հետ կապ ունի անշուշտ բժշկարանի մը⁸² հատուածը, ուր շունը կեանքի եւ մահուան հետ աղերսի մէջ կը դրուի. «Հիւանդն մահո'ւ է՝ թէ կենաց, երբ ջուր ուզէ՝ տուր ջուր եւ զկէսն յեա առ եւ վրայ շան լից. թէ շունն թափ տայ՝ կ'ապրի, թէ չէ՝ մեռանի»: Սիմէոն Դպիր Լեհացի⁸³, իր նորագիւտ «Ուղեգրութեան» մէջ, որ «Հանդէս»ի մէջ պարբերաբար լոյս տեսնել սկսաւ, կը պատմէ Թիւրքերու մասին, թէ «հոգ տանին անասնոց, գաղանաց եւ թռչնոց: Կայ մեծ մէջլիթ մի Ղարամանն, այն որ յԱվլուն, քանի տեղ քապապնի խորովեալ՝ արկանեն շանց եւ կատվից որ տէր շունին. այլ եւ ազոաւուց եւ այլ թռչնոց, որ սովորեալ ի ժամն այն՝ զան ժողովեալ երամով առ ի ուտել»: Սիմէոն Դպիր այս տեղիքը կը յիշեցնէ արաբական հաւատալիքը, որուն վրայ խօսք ըրի ուրիշ առիթով⁸⁴. Ճիշտերը յաճախ շան կամ կատուի կերպարանք կը զգենուն. ուստի եւ արարներն զգուշութեան համար անոնց վնաս չեն հասցներ, ընդ հակառակն կը կերակրեն:

Քանի որ շունն այսպէս անձուկ աղերսով զօղուած է կեանքի եւ մահուան գաղափար-

⁷⁶ Անդ, X, էջ 211:
⁷⁷ Անդ, XXV, էջ 49: Նաեւ Բուլանըխցիներու հաւատքով՝ շունն հոգեհոտը տեսնելուն համար կ'ոռնայ. անդ, 6, էջ 173:
⁷⁸ Բիւրակն, 1899, Կեսարիայի մասին, էջ 280. Կիւրինի, էջ 440. Մանիսիայի, էջ 820. Սղերդի, էջ 456. Բարերդի, էջ 521:
⁷⁹ Արրահամ Քահանայ Կ. Պոլսեցւոյ այս տեղիքը կը պարտիմ Վենետիկի Մխիթարեան Վ. Հ. Կիւրեղ Քիլիարեանի, որ սպնուարար հաճեցաւ ինծի մատչելի գործնել Արրահամի «Պատմութիւն Անասնոց» գրութեան՝ շան յատկացուած կտորը. սրտագին շնորհակալութիւններս Վ. Հ. Կիւրեղ Քիլիարեանի: Հ. Ալիշան, որ «Պատմութիւն Անասնոց»ը Բազմավայի մէջ հրատարակած է, շան այդ կտորին հետ նաեւ ուրիշ կենդանիներու նուիրուած նկարագրութիւններ զանց ըրած է հրատարակել: Շատ բաղձալի է, որ Բազմավայի լրացնէ Հ. Ալիշանի այս թերին, Արրահամի նոյն գրութեան լոյս չտեսած մասերն հրատարակելով: Անշուշտ անոնց մէջ թանկագին էջեր կան, ինչպէս որ շան հաւատածին մէջ ուրբախութեամբ գտայ:

⁸⁰ Հանդ. Ամս., 1931, էջ 649—655:
⁸¹ Հրատ. Էմինի, Մոսկվա, 1860, էջ 258:
⁸² Հ. Ղ. Յովնանեան, Հետազոտութիւնք նախնայ ռամկորէնի վրայ. Մասն Ա. — Տետր Բ. (Ազգ. Մատեն. Ին). Վիեննա 1897, էջ 512:
⁸³ Հանդ. Ամս., 1932, էջ 481:
⁸⁴ Անդ, էջ 507:

ներուն հետ, զարմանալի է, երբ զայն բժշկարաններու մէջ գտնենք իբր դեղ ամէն տեսակ ցաւերու: Օրինակի համար Ամիր Տովլաթ⁸⁵ սա հատուածն ունի. «Քալպ, որ է շունն. եւ թէ կատղած շան խածածին զշան շունն. եւ թէ կատղած շան խածածին՝ աւգտէ. եւ թէ լերդն խորվեն եւ ուտեցնեն՝ աւգտէ. եւ զմահացու զարունն այլ խմեն՝ աւգտէ. եւ զմահացու զեղոց զչարութիւնն տանի. եւ թէ ամուսն աւուրքն զշան փինն չորցնեն ի շուքն, կամ զինով կամ ջրով խմեն՝ զփորն կապէ. եւ թէ զշունն, որ յառաջն ցնկնի, զկաթն առնուն եւ զմահն աւծեն՝ թափի, եւ այլ չբուսնի. եւ թէ զմահն աւծեն՝ թափի, եւ այլ չբուսնի՝ աւծես, ի կոպին վերայ աւելի մաղ բուսնի՝ աւծես, ի կոպին. եւ թէ խմես՝ զմահացու դեղոց զչարութիւնն տանի, ի փորուն զմեռած տղան հանէ. եւ թէ այն շունն որ ոսկր կուտէ զիր փինն առնուն եւ չորցնեն եւ պահեն, յորժամ պիտենայ՝ ծեծեն եւ մաղեն, եւ խնախին սպեղանի առնեն, աւգտէ խիստ աղէկ. եւ թէ այս փինէս բարակ մաղեն, կամ երկաթով կամ քարով խարած ի կաթն խառնեն, եւ տան որ խմէ՝ աւգտէ տուսանտարիային. եւ թէ ի շափն դեղերն խառնես՝ շատ աւգտէ... եւ թէ զշան մեծ աղան այն մարդուն թեւն կապէս որ ի քունն զրուցէ՝ աւգտէ եւ այլ չզրուցէ. եւ թէ տղայն զայս ի վիզն կապեն՝ աւգտէ աչացաւի, եւ աղան բուսնի հեշտ...»:

Հոս կ'ուզեմ յիշել Տրանսիլվանիոյ հայերուն⁸⁶ բերնէն առնուած աւանդութիւն մը շներու յառաջագայութեան մասին: Էականն հոս այն է, որ այս կենդանիները կեանք եւ գոյութիւն կը ստանան մեռած մարդու մը դիակէն: Այդ մարդը նշանաւոր հանդիսացած դիակէն: Այդ մարդը նշանաւոր մեծ հաւանք իր տիրոջ հանդէպ ունեցած մեծ հաւանքով իր տիրոջ հանդէպ ալ իր մարմինն տարմութեամբ. անոր համար ալ իր մարմինն յառաջ եկած շներն իր այդ տիպար առաքիչութիւնն իրենց վրայ մարմնացուցին: Ահա առասպելը.

«Կար չկար, շատ շատ տարիներ յառաջ հարուստ մարդ մը կար, որ ծառայ մը ունէր: Ծառան ա'յնչափ հաւատարմութեամբ կը ծառայէր անոր, որ ո'չ ցերեկը եւ ո'չ գիշերն անոր քովէն կը հեռանար: Տէրն ալ միւս կողմանէ զայն ա'յնչափ կը սիրէր, որ կար-

ծես թէ իր եղբայրն ըլլար. անոր համար շամուսնացաւ, որպէս զի իր սէրը միայն ծառային մնայ: Անգամ մը տէրն իր հաւատարիմ ծառային հետ որսի ելաւ. ամբողջ օրն անտաններուն մէջ թափառեցան՝ առանց երէի մը հանդիպելու: Սակայն իրիկուան դէմ մեծ եղջերուի մը պատահեցան. ասոր վրայ իրարմէ բաժնուեցան՝ եղջերուն երկու կողմանէ հալածելու համար:

«Քիչ մը վերջը տէրը թուփերուն մէջ խշրտոց մը լսեց եւ մտածեց, որ եղջերուն հոն պիտի ըլլայ. ուստի գէնքն արձակեց այդ ուղղութեամբ եւ մարդկային աղաղակ մը լսեց: Սարսափահար՝ հոն վազեց եւ իր հաւատարիմ ծառան տապաստ ինկած գտաւ, կուրծքէն վիրաւոր: Առանց գիտնալու զայն սպաննած էր: Կոծելով հաւատարիմ ծառայի դիակին վրայ ինկաւ եւ ամբողջ գիշերն ողբաց, մինչեւ որ առտուան դէմ ուժասպաս եղած՝ մրափեց: Երազին մէջ Ս. Գրիգոր Լուսաւորիչը տեսաւ, որ իրեն ըսաւ. «Դուն հաւատարիմ ծառայ սպաննեցիր, որ սիրելի ամուսինէ մը եւ եղբորէ մը աւելի կապուած էր քեզի: Արդ, պէտք ես ապաշխարել եւ քեզի ա'յնչափ ժամանակ անոր դիակին քով աղօթել, մինչեւ որ ան քայքայի եւ փոշի դառնայ: Եւ երբ Աստուած այդ փոշին կենդանի ստեղծէ — որ իր հաւատարմութեամբ մը աշխարհիս միւս ամբողջ կենդանիները պիտի գերազանցէ — այն ատեն մեղքդ քաւած եւ թողութիւն ընդունած կ'ըլլաս:

«Երբ տէրն արթնացաւ, անմիջապէս քաղաք դնաց եւ գլխուն եկած դժբախտութիւնը պատմեց: Յետոյ ամբողջ ունեցածը ծախեց եւ դրամն աղքատներու մէջ բաժնեց: Ճգնաւոր զգեստ մը հագած՝ վերստին անտաւորի զգեստ մը հագած՝ վերստին անտաւոր զգեստ, ուր գիշեր ցերեկ աղօթքով անցուց հաւատարիմ ծառային դիակին քով:

«Այս կերպով եօթը տարի անցաւ, եւ հաւատարիմ ծառային մարմինը փոշի դարձաւ. միայն գլուխը դեռ անմիջապէս մնացած էր: Օր մըն ալ տէրը տեսաւ թէ անհամար որդեր կը վխտային անոր գլխուն բոլորտիքը. անոնք կայրկենէ վայրկեան մեծցան եւ վերջապէս կենդանուց մը կերպարանքն առին: Անթիւ կենդանիներ, որ առաջ տեսնուած էին, շրջապատեցին տէրը. ան զարմանքով անդրադարձաւ թէ ծառային գլուխն աներեւոյթ էր եղած: Տէրն իմացաւ որ Աստուած իրեն թողութիւն շնորհած էր. ասոր վրայ իր կեն-

⁸⁵ Ամիրտովլաթի Ամասիացւոյ Անդիտայ Անպետ կամ Բառարան բժշկական նիւթոց. Ի լոյս էած Կ. Յ. Բասմաջեան (Կ. Յ. Բասմաջեան Մատենագարան Ա.). Վիեննա 1927, էջ 595:
⁸⁶ Dr. Heinrich Wlislöck, Märchen und Sagen der Bukowinaer und Siebenbürger Armenier. Aus eigenen und fremden Sammlungen übersetzt. Hamburg 1891, էջ 10:

դանիններն առած — որոնք այնուհետև հա-
ւատարմութեամբ իրեն հանդէս դացին —
քաղաք դնաց եւ կենդանիները մարդիկներուն
բաժնեց, միայն ղոյզ մը իրեն պահելով: Այդ
կենդանիները իրենց հաւատարմութեամբ դե-
րագանցեցին միւս ամբողջ կենդանիները.
այդ ժամանակէն ի վեր մարդկութիւնը շու-
նեցը կը ճանչնայ»:

Մինչեւ հիմայ ըստածները նկատելէ յե-
տոյ, դժուար պիտի չըլլայ մեզ լուծել այն
հարցը՝ թէ՛

գ. Զուտ ազգայի՞ն էր արալեզներու հա-
ւատքը: — Արալեզներու մասին Եզնիկի
տուած նկարագրութիւնը եւ խօսելու կերպը
ցոյց կու տան, որ մեր հեղինակը ազգային
հաւատալիք մը կ'ուզէ ներկայացնել մեզի:
Եւ եթէ ամէնէն աւելի հայկական գծերով
պատկերացուած հաւատալիք մը կայ Եզնիկի
բով, այդ ամէնէն յառաջ արալեզներու ա-
ռասպելն է: Իրաւունք ունի Էմին⁸⁷ պնդելու՝
թէ արալեզներն «ի բնիկ աստուածոց Հայոց»
ըլլալ կը թուին: Եւ դարձեալ «Գոյութիւն
աստուածոց» լիզողաց զվէրս անկեղց ի պա-
տերազմի եւ այնու կենդանութիւն հաղորդու-
ղաց սպանելոցն, թուի լինել մի ի մասանց
հաւատոյ նախնեաց մերոց ի հեթանոսութեան
անդ»: Լանդուա, Սէյս, Բասմաջեան փաս-
տերով համոզելի չեն կրնար դարձնել իրենց
այն վարկածը՝ թէ ասորեստանեան ծագում
ունին մեր շնաստուածները⁸⁸: Նոյն խօսքը
կ'արժէ նաեւ Գուրեանի մակարերութեան
մասին, որուն համաձայն փոխազական ծա-
ղում վերագրելու է արալեզներու: Մատի-
կեան, որ արալեզներու հարցով շատ խղճմը-
տօրէն զբաղեցաւ, կ'ըսէ⁸⁹. «Հակառակ իմ
ամէն ջանքերուս եւ պրպտումներուս, ան-
կարելի եղաւ ազգ մը գտնել կամ կրօն մը,
բաց ի հայկականէն, որուն մէջ չները լիզե-
լով՝ կենդանութիւն տան դիակի մը կամ մե-
ռած աստուծոյ մը: ... Ուրեմն չներու լիզե-
լով յարութիւն տալու երեւոյթը կը մնայ առ
այժմ գուտ հայկական: Այսու հանգերձ
երեւոյթիս ազգային նկարագրին սկզբնակա-
նութեան վրայ կը տարակուսիմ»:

«Զուտ հայկական» եւ «սկզբնականու-
թեան վրայ տարակոյս»․ արդեօք ինքն իրե՞ն
կը հակասէ Մատիկեան: Ո՛չ երբեք: Հաւա-

⁸⁷ Վէպը Հնոյն Հայաստանի, էջ 82:

⁸⁸ Հմմտ. վերն, էջ 491—497:

⁸⁹ Արայ Գեղեցիկ, էջ 123—124:

տալիք մը կամ առասպել մը բոլորովին ազ-
գային կերպարանք կրնայ առնել, առանց ազ-
գին մէջ կղզիացած կերպով ծագած ըլլալու:
Վասն զի շատ անգամ այդ հաւատալիքը կամ
առասպելը հին դարերու խորքէն ժայթքող
ակնադրուրէ մը կրնայ բխած ըլլալ, որմէ
բաղմաթիւ ազգեր անկախօրէն ատարձ կը
քաղեն իրենց դիցարանութեան: Այլապիսի հա-
տարակայ ակնադրուրէ մը առած են Հնդկի-
ներն իրենց diausը, Յոյներն իրենց Զեւսը,
Լատիններն ու ռոմանական ցեղերն իրենց
deus, dio, dieu անուններն եւ ուրիշ բազմա-
թիւ ազգեր: Diausն ա՛յնչափ ազգային է
Հնդկիկն համար որչափ Զեւսը Յոյնին,
deusը Լատինին: Նոյն է նաեւ արալեզներու
պարագան: Քիչ մը վերն յառաջ բերած զու-
գորդներէս յայտնի կը տեսնուի, որ Եզնիկի,
ուրիշ հայ մատենագիրներու եւ արդի սին
հաւատքի յիշած հաւատալիքները գրեթէ ամ-
բողջութեամբ աշխարհիս հինգ մասերու մէջ
կը գտնուին: Իւրաքանչիւր ցեղ հաւանարար
նոյն հասարակայ ազբիւրէն առած է — միջ-
նորդարար կամ ոչ — իր այդ կարգի հաւա-
տալիքներն՝ սկզբնականին վրայ նորանոր
տեսադձեր եւ եղանակաւորումներ աւելցնե-
լով:

Ազգերու հաւատալիքներու մէջ արալեզի
նմանող շնաստուածներու ընդհանուր եւնկա-
րագրական գծերն հետեւեալներն են. շնաս-
տուածը յարութեան ստար կը հանդիսա-
նայ եւ մեռելի հոգւոյն կ'առաջնորդէ (Անու-
րիս)․ շունն՝ իբր նուիրական կենդանի կեանքի
աստուածութեան մը վէրքեր կը լլէ եւ կը
բժշկէ (Ասկլեպիոսի շները) ու երբ հոգեառը
կը տեսնէ, արամութենէն կը կազկանձէ,
վասն զի մէկը կեանքէ պիտի զրկուի: Զար-
մանալի չէ որ այս ոռնոցը մահաբուշակ նշան
մը կը համարուի եւ ասոր հետեւանքով շունը
սանդարամետական սեւ նկարագիր մը կը
ստանայ: Մեր արալեզները սակայն բոլորովին
ինքնատիպ յատկութիւններ ունին, որոնցմով
անոնք ազգային նկարագիր մը կը դրենուն.
չնազգի էակներ են, որ «ընդ անբերեղթ զօ-
րութիւնս» կ'ապրին, պատերազմի մէջ վի-
րաւորուած զիւցազները կ'առողջացնեն լի-
զելով՝ ըստ Եզնիկի. իսկ Փաւստոսի եւ Խո-
րենացոյ պատմածներէն ծանօթ է, թէ նաեւ
յարութիւն կու տային: Ուստի հոս երկու
յատկութիւններ կը գտնենք, որոնցմով մեր
արալեզներն ազգային կերպարանք կ'առ-

նեն. 1. պատերազմի մէջ վիրաւորուած դի-
ցագները կ'առողջացնեն եւ 2. կրնան անոնց
յարութիւն տալ:

Սակայն կա՛յ նաեւ զօրաւոր փաստ մը,
որով կարելի է ցուցնել, թէ արալեզներու
հաւատալիքն ազգային դրոշմ կը կրէր: Ու-
կերերանի⁹⁰ «Պաւղոսի Մեկնութեան» մէջ
հաստատուած մը կը հանդիպինք, ուր կը խօսուի
յոյն դիցարանութեան այլ եւ այլ հրէշներու
եւ վիշապներու մասին, եւ այդ առթիւ հայ
թարգմանիչը բնագրին մէջ իր կողմանէ
խորհրդածութիւն մը կը ներմուծէ. «որպէս
եւ Հայք ծովացուս եւ վիշապս մարդակերպս
եւ պայս եւ առլեզս համբաւեն»: Մարդ ար-
տաքոյ կարգի սրամտութեան մը պէտք չունի՝
տեսնելու համար թէ թարգմանիչն հոս յոյն
դիցարանութեան դէմքերուն դիմաց հայ դի-
ցարանութեան դէմքերը դրած է. եւ կամ՝
ցարանութեան անունները դրած է. եւ կամ՝
օտար հայեացքներուն առնթեր՝ ազգային
համապատասխան հաւատալիքներ գետեղած
է, որպէս զի իր ընթերցողները, որոնք հար-
կաւ յոյն դիցարանութեան մասնագէտներ ը-
լալու պէտք չունէին, ազգային դիցարանու-
թեան նման հաւատալիքներով ըմբռնէին
բնագրին իմաստը:

Արդ, կարծեմ այսքանը բաւական է մեր
մէջ համոզում գոյացնելու, թէ արալեզներու
հայ հաւատալիքը — որուն զուգակշիւրը նաեւ
Արխագներու քով կայ — տեղական հայեացք
մըն է, բազմաթիւ ազգերու յատուկ հասա-
րակայ ազբիւրէ մը բխող:

Ասով հանդերձ, տակաւին ամէն հարց
չէ լուծուած: Դեռ կը մնայ մութ կէտ մը, որ
պէտք է լուսարանուի: Ինչո՞ւ համար շունը
մահուան եւ կեանքի հետ սերտօրէն կա-
պուած կենդանի մըն է, որ դարերէ ի վեր
ուժգին կերպով կը տիրապետէ ազգերու
սնահաւատ ուսմակին վրայ: Եւ կամ, ուրիշ
խօսքով.

դ. Ի՞նչ կարգի աստուածութիւններ (կամ
ոգիներ) էին արալեզները: — Մեր այս հար-
ցումին պատասխանը հին Հնդկիկներու նուիր-
ական մատեաններուն մէջ պիտի գտնենք:

⁹⁰ Յովհաննու Ոսկերեանի Մեկնութիւն թղթոցն
Պաւղոսի, Հատոր Ա., վեներակի 1862, էջ 602.
«... գծիացուսն ի քմաց ստեղծանեն եւ գրեմասն,
այսինքն որ վիշապոսիւն քաղսն համբաւեն եւ զայլսն
նոյնպիսի վիշապոսունս եւ զոր սկիւզսն անուանեն,
որ թարգմանի ապուռք, որպէս եւ Հայք ծովացուս
իմն եւ վիշապս մարդակերպս եւ պայս եւ առլեզս
համբաւեն»: Հմմտ. Հանդ. Ամս., 1927, էջ 768—769:

Բայց նախ քան այդ, անհրաժեշտ լուսարա-
նութիւն մը տալ թոյլ տրուի ինձի:

1905ին Maurice Bloomfield ամերիկացի
հնդկագէտը՝ դիցարաններու կը յանձնէր իր
մէկ նոր գործը, «Cerberus, the dog of Hades,
the history of an idea. Chicago—London», ուր
հեղինակը սրամտութեամբ երեւան կը հանէր
կեանք-մահի շնաստուածներու սկզբնական
նկարագիրն ու անոնց մասին կազմուած հայ-
եացքներուն իմաստի բանալին: Bloomfieldի
եացքներուն իմաստի բանալին: Bloomfieldի
պիտու եւ լուսնոյ հետ:

Որչափ ալ նախ անակնկալի գան ոմանք
այս եզրակացութենէն, անմիջապէս պիտի հա-
մոզուին, երբ նկատեն Ռիզվեդայի տուեալ-
ներն այս մասին, զորոնք արիագէտ մեծ դի-
ցարան L. v. Schroeder⁹¹ Bloomfieldէն քաղե-
լով՝ համադրած է: Ես կը գոհանամ L. v.
Schroederի գրութենէն քանի մը կարեւոր հա-
տուածներ յառաջ բերելով: Ինչպէս որ
տուածներ յառաջ բերելու սանդարա-
վերն ակնարկեցի, հնդկիկներու սանդարա-
մետի աստուածը Եամա երկու շուն ունէր,
որոնց մասին նուիրական բնագիրները կ'ըսեն՝
թէ անոնք երկնաբնակ են, ուստի եւ հաւա-
սարպէս կը կոչուին «երկնային երկու շներ»
եւ «Եամայի երկու շներ», վասն զի Եամայի
տէրութիւնը (սանդարամետ) երկնի բար-
ձունքներու վրայ կը մտածուէր: Հին բնա-
գիր մը կ'ըսէ. «Յիրաւի, Եամայի այդ եր-
կու շներն օր եւ գիշեր են»: Ուրիշ տեղ մը
աւելի մանրամասն կ'արտայայտուի սրբազան
երգիչը եւ Խայտարգէտ (Սարալա) շունն օր
կ'անուանէ, իսկ թուրը (Սիամա՛) գիշեր:
Թէ ի՞նչպէս հասկնալու է այս տեղիքները,
այդ մեզի կը սորվեցնեն ուրիշ հատուածներ,
որոնցմէ ակնյայտնի կ'երեւայ՝ թէ երկու
շներուն ներքեւ արեւն ու լուսինը տեսնելու
ենք, ցերեկուան եւ գիշերի մեծագոյն աստղ-
ները, որոնք՝ իբր իսկական ներկայացու-
ցիչները ցերեկուան եւ գիշերի՝ հաւասար կը
համարուին օրուան այդ երկու կէտերուն:
Մատապաթա—Բրահմանա շներէն մէկուն մա-
սին կ'ըսէ յայտնի կերպով. «Լուսինն սուռ-
գիւ երկնային շունն է. անիկա վար կը նայի՝
գոհի կենդանւոյն վրայ»:

Արեւն ու լուսինը կը ներկայացնեն օրն ու
գիշերը կամ ուրիշ խօսքով յաւիտենապէս

⁹¹ Herakles und Indra, էջ 85—91:

անցնող ժամանակը, եւ իբր այդպիսինքն մարդկան կեանքն անխնայ կը մաշեն եւ սանդարտմտի թագաւորին հրամանով վերէն կը հսկեն մարդկան վրայ: «Օրն ու գիշերը՝ մահուան համապարփակ բազուկներն են» կը վարդապետէ վերը յիշուած գիրքը: Անոր համար կը պաղատին ցերեկին եւ ցայգին, որ երկար կեանք չնորհեն, ինչպէս նոյն աղաչանքը կ'ըլլայ Եամայի երկու շնորհն: «Տարին մահ է. օրուան եւ գիշերի օգնութեամբ մահկանացունքը կեանքը կը քանդէ» կը խօսի նոյն բնագիրը: Օրուան եւ գիշերի մահարբեր ոյժին ենթակայ չըլլալու համար, պէտք է ճերմակ ու սեւ բրինձ պատարագել եւ ըսել. «Կեցցէ՛ օրը, կեցցէ՛ գիշերը»:

Արդ, եթէ Եամայի մահուան երկու շներն արեւու եւ լուսնոյ հետ կը նոյնանան, զարմանալի չէ, որ Ուսայնիչազի մէջ այդ մեծագոյն աստղները կայաններ կը նկատուին, ուր երկինք դացող հոգին դադար կ'առնէ: Արեւու շրջանէն լուսնի շրջանին կ'անցնի ճամբորդող հոգին, կամ Սայտաբղէտ շունէն (արեւէն)՝ Թուխ շան կ'երթայ:

Հոս է ուրեմն արալէզներու եւ նոյնազգի շնաստուածներու հաւատալիքին յառաջատուութեան առաջին փուլերէն մին, որ այդ համատարած հաւատալիքին վրայ բոլորովին նոր լոյս մը կը սփռէ: Այդ լոյսը Ռիզովեզայէն կը ծագի եւ համաշխարհային դիցարանութիւններու շատ մը մութ մնացած կէտերը կը լուսարանէ: Դժբախտաբար Bloomfieldի ուսն-վիրայական անգրագարձութիւնները շատերուն անձանօթ մնացած են մինչեւ օրս: Արիագէտ մեծ գիցարանը, L. v. Schroeder, մեծապէս կը դնահատէ Bloomfieldի գործը՝ երբ հիմնաւոր եւ հանձարեղ երկ:

Մենք Ռիզովեզայի մէջ երկնային երկու շներ գտանք, որոնք կեանքի եւ մահուան պաշտօնեաներ են եւ կը նոյնանան ցերեկուան կենսատու աստղին — արեւուն եւ գիշերուան մշտամեռ-մշտածին լուսաւորին — լուսնոյ հետ: Կեանք՝ եւ արեւ. մահ՝ եւ լուսին. ահա հայեացքներ, որոնք իրենց ընդարձակ մանրամասնութիւններով կը զբաղեն նաեւ հայ սնահաւատ ժողովուրդին միտքը: Կեանք (շուն) — արեւը մինչեւ օրս մեր մէջ արժող դադարի մըն է: Ունինք բազմաթիւ աստ-թիւններ, որոնցմով արեւն ու կեանքն իրարու հետ կը նոյնացնենք. «գարեւ կրել» = ապրել, «յարեւէ անկանիմ» = մեռնիլ, «յա-

րեւէ արկանել» = մեռցնել. «գարեւ հատանել» = մեռցնել. «արեւչատութիւն, ապրի՛ արեւդ, քու կանանչ արեւը, արեւ՛ուդ մեռնիմ. քու կանանչ ու կտրիճ արեւ կտուտի» եւ այլն⁹²: Եզնիկ ինքն արդէն լուսինը կը նկատէ իբր պատկեր մահուան եւ յարութեան. «Լուսին ամսոյ ամսոյ հիւծանի, գրեթէ եւ մեռանի, եւ ապա սկիզբն առնու կենդանանալոյ, զի քեզ զյարութեան օրինակն նկարիցէ (էջ 19): Նոյն դադարի կը յայտնէ Ագաթանգեղոս⁹³, երբ կ'ըսէ. «(Լուսին) յարեւմտից մինչեւ յարեւելս երթայ ի մանկութիւն: ... Դարձեալ յարեւմուտս... ծերացեալ հասանէ, պատի, քաղի, գուշակ քաղիւց, յալութիւն մեռելոց»: Ակնյայտնի է թէ Ռիզովեզայի հայեացքներն այսպէս նաեւ հայկական հաւատալիքներ եղած են. արալէզները Եամայի երկու շներն են. կը նոյնանան արեւու եւ լուսնոյ հետ եւ — ինչ որ շատ կարեւոր կէտ է — «կեանք» եւ «արեւ» հաւասար դադարներ են:

Եզնիկ եւ ուրիշ մատենագիրներ բազմաթիւ արալէզներու մասին խօսք կ'ընեն: Եւ յերաւի պատճառներ ունինք ենթադրելու, թէ մէկէ աւելի էին անոնք. նախ Եամայի երկու շները բաւական հիմ կը ներկայացնեն ենթադրութեանս. անոնցմէ մին՝ Սարալա = Սայտաբղէտ կը կոչուի. իսկ միւսը Սիամա = Թուխ: Հայ ժողովրդական հաւատքն ալ կը ճանչնայ երկու շներ, մին Սեաւ, միւսն Սպիտակ: Ասոնց մասին Հ. Ալիշան⁹⁴ վանական վարդապետի մէկ հատուածը յտաջ կը բերէ. «Վանական վարդապետ Յարալէզ կոչէ եւ համարի մեր ուրիշ եւ նորագոյն առասպելաւանդ թագաւորի մի՛ Արտաւազդայ՝ երկու Շուներն, Սեաւ եւ Սպիտակ, որ յար լիզուն զկապանս նորա»: Գրեթէ նոյն տեղիքն ունի նաեւ մեր ձեռագրական հաւաքածոյի⁹⁵ Թիւ 7 Յայտաւուրքն՝ հետեւեալ ձևով. «... եւ երկու շուն՝ Սեւ եւ Սպիտակ, յար լիզուն զկապանս նորա. այս է յարալէզ առասպելն որ ասեն»: Տարբերակի մը մէջ Ոսկեփորիկն⁹⁶ ունի. «Աստուածքն Շիզարայ յափշտակեցին զնա եւ եղին ի Սեաւ լեռոն, որ է Աւագ Մասիս, եւ անդ կայ շրթայած.

⁹² Հմմտ. Հանդ. Ամս., 1929, էջ 754—757:
⁹³ Հմմտ. Հանդ. Ամս., 1931, էջ 489—490:
⁹⁴ Հին Հաւատք, էջ 178:
⁹⁵ Հ. Տաշեան, Յուցակ Հայերէն Ձեռագրաց Մատենագրանին Միութարեանց ի Վիեննա, 1895, էջ 25:
⁹⁶ Բագմովեպ, 1877, էջ 276:

եւ երկու շուն, մին սպիտակ եւ միւսն սեւա կու լիզեն զշրթայսն Շիզարայ հանապարդ»: Առանց վարանելու կրնանք հաստատել, թէ սոյն երկու շներն արալէզներն եւ Եամայի դոյզ շներն են, ոչ միայն իրենց Սեւ (Սիամա) եւ Սպիտակ (Սարալա) անուանակոչութիւններով, այլ նաեւ իրենց կատարած պաշտօնով — լիզմամբ արեւու եւ լուսոյ բանտարկուած հերոսն աղատել — որուն մասին հանդամանօրէն յետոյ կը խօսիմ, երբ Եզնիկի քով պահուած Արտաւազդի առասպելի քննութեան հասնիմ:

Կարծեմ այլեւս պէտք չունիմ շեշտելու թէ նախորդ հետախոյզներու առաջարկած այլ եւ այլ զուգորդներն անյաջող նկատուելու ենք. Դուրեան մեր արալէզները հիւսիսական (սկանդինավեան) դիցարանութեան վաղիւրներու⁹⁷ հետ կ'ուզէ նոյնացնել. եւ նկատելով որ արալէզները երկրաւոր ողինքը չէին եւ երկնային ընդաւառէ մը կ'իջնէին, չէին Դուրեան⁹⁸, «քրիստոնէութիւնն իր ներողամիտ հայեցումովն զանոնք ալ ուրիշ շատ մը ողինքներու հետ փոխարկեց՝ այսպէս յոռոնք են ի ներքոյ երկնից»: Դուրեանի յիշած սոյն այսերն արդէն ծանօթ են մեզի եւ ապահով ենք որ անոնք արալէզներու հետ ամենեւին անհոյսութիւն չունին: Բասրու մաջանի ըրած համեմատութիւնները տեսանք արդէն⁹⁹:

Գննելի կը մնայ հարց մը, զոր Մատիկեան¹⁰⁰ սրամտօրէն կը յուզէ սա խօսքերով. «Քաջամարտիկ Արայ Գեղեցիկ էր միանգամայն քաջ որսորդ մը: Դիցարանական աշխարհի մէջ այս երկու գաղափարներն իրարմէ գրեթէ անբաժան էին. եւ որսորդ հերոսն ունէր նաեւ իր շունը: ... իրենց զարգացման ամենասկզբնական շրջանին որսորդ եւ քաջամարտիկ Արային ընկերացող շնիկներ համարելու քան թէ Արայի

⁹⁷ Հիւսիսական դիցարանութիւնը կը պատմէ, թէ պատերազմի աստուած Ողին՝ պաշտպան է հերոսներու եւ մարտիկներու: Երբ ասոնք պատերազմի դաշտին մէջ իյնան, աստուածը զանոնք իր վաղիւր կոչուած սպասուհիներու միջնորդութեամբ իր քով բերել կու տայ: Պատերազմէն յետոյ վաղիւրներն Ողինի խորհրդով կ'որոշեն սոյն հերոսները, որոնք կ'ապրին իյնած ճակատին մէջ: Պատերազմի աւարտին կ'իջնէ իրացողները վալճալ — Ողինի պալատը — կանաչներն եւ յետոյ կը հիւրասիրեն. Örelli, II, էջ 333 եւ 341:
⁹⁸ Հմմտ. Հանդ. Ամս., 1932, էջ 491:
⁹⁹ Անդ, էջ 502, Հմմտ. Բիւրակի, 1897, էջ 40:
¹⁰⁰ Արայ Գեղեցիկ, էջ 120—121:

մահուան հետ միայն յարաբերութեան մէջ գնել»:

Գր. Տէր-Պօղոսեան իր «Նախնի Հայոց հոգեպաշտական շրջանից» գրութեան մէջ¹⁰¹ կը կարծէ Եզնիկի քով զորաւոր փաստ մը դատած ըլլալ՝ հոգեպաշտական այն խախտու սկզբունքին, թէ «ամէն մի ծնուող մանուկ իր ամենահեռաւոր նախորդների հոգին է բովանդակում իր մէջ: Նախ քան տոհմի նախանախորդը մարդիկ չկային, միայն կենդանիներն ու բոյսերն էին, որոնց անունով էլ կոչուեցին նախանախորդները եւ նրանց սերունդը: Ուստի յետնորդները կրում են իրենց մէջ կենդանիների հոգին: Կրօնական հասկացողութեան առաջին քայլերը այդպէս են սկսուած», կ'ըսէ Տէր-Պօղոսեան, եւ իր այս ոչ զիտական տեսակէտը կը ջանայ Եզնիկի ծանօթ տեղիքներով լուսարանել, որոնք արալէզներու կը հային: Յետոյ կը խորհրդածէ. «Այստեղ շեշտուած է շնից թէ՛ որեւէ աստուածային հոգու բղխման եւ թէ՛ մեռածների հոգեստացման անհնարաւորութիւնը. ուստի հակադիր մտածմամբ հասկացուած է որ դաւանուած են շները հնում իբրեւ հոգու աղբիւր: Սակայն այդ հին հաւատալիքի մի մասն է միայն եւ թերի հասկացողութիւն է (!). լրիւր այն է որ շները ընդունում էին առաջ մարդկանց հոգիները նրանց մահուան եւ ծերութեան ժամանակ եւ ապա իբրեւ շտամարան նախնեաց հոգիները, այդպիսի շները լիզելով պատերազմում վիրաւորուածներին հաղորդում էին նրանց շունչ եւ հոգի: Այսպէսով ահա հասկացողութիւնը եւ մտապատկերը ամբողջանում է յարալէզների վերաբերեալ թերի աւանդութեան մէջ, երբ անաղիսապէս ի նկատի ենք առնում այն դրականութիւնը, որի նիւթն է հին դիցարանութիւնների մէջ շների պաշտաման պատկերը»: Մենք արդէն մանրամասնօրէն քննեցինք այդ մատենագրութիւնը եւ բոլորովին տարբեր կըրակացութեան մը հասանք, որ հեռի է Տէր-Պօղոսեանի վարկածին նմանելէ:

Սաշիկ Սամուէլեան, Տէր-Պօղոսեանի տեսակէտներէն տարուած, նման արտայայտութիւններ կ'ընէ արալէզներու մասին: Չեմ կարծեր, թէ ուղիղ բնաբան մը պաշտպանէ, եթէ առանց այլեւայլի ընդունի Տէր-Պօղոսեանի տեսութիւնը: «Երբ համեմատութեան

¹⁰¹ Յուշարձան, Գրական ժողովածոյ, Վիեննա 1911, էջ 236—237:

ենք առնում չան պաշտամունքը հին աշխարհի եգիպտացիների, պարսիկների, հնդուների, յոնիների, ինչպես եւ մեր ժամանակակից մի քանի ժողովուրդների, օրինակ՝ կովկասեան լեռնականներից — օսերի, ինդուների, խեւսուրների մէջ, կ'ըսէ Սամուէլեան, նկատում ենք որ շան պաշտամունքը սովորաբար կապված է մեռեալների եւ մահուան հաւատալիքների հետ: Դա բոլորովն է այդ ժողովուրդների մէջ տիրապետող հոգեպաշտական հայեացքներից: Շունը, լինելով մարդուն մօտիկ ապրող եւ նրա տանը հաւատարիմ կենդանի, ինքնըստինքեան դասվում էր տոտեմների շարքը, որոնք նախնական մտապատկերներում ներկայացնում էին իբրեւ ցեղական կամ տոհմային նախահօր կերպարանափոփված հոգին կամ այդ կենդանու մէջ ապաստանած մեռեալի հոգին: Հետեւապէս շունը համարվում էր մարդկային հոգի ունեցող եւ նոյն խակ այդպիսի հոգի տվող: Արդեօք սրանով չպէ՞տք է բացատրել այն հաւատալիքը, որ շունը թշնամի է «հոգեառ հրեշտակին» եւ ոռնում է նրան տեսնելիս¹⁰²»:

Ե. Լէգիի ուխտատեղին: — Մատենագրութեան մէջ առաջին անգամ թուվաւս Արծրունի յառաջ կը բերէ Լէգիի առասպելը, որ մանրամասնօրէն նաեւ արդի ժողովրդական բանահիւստութեան մէջ կը պատմուի: Ուստի երախտապարտ ըլլալու ենք Թ. Արծրունեայ՝ այդ առասպելը մեզի աւանդելուն համար: Թ. Արծրունեայ խնդրական հատուածը սակայն շատ խանգարուած ձեւով կը ներկայանայ մեզի. բայց փոքրիկ ճիգ մը բաւական պիտի ըլլայ բնագիրը վերականգնելու եւ հեղինակին միտքն հասկնալու: Մանաւանդ որ Ն. Բիւզանդացի, Մ. Արեղեան եւ Հ. Մատիկեան այս տեսակէտով գիւրացուցած են մեր ընելիքը՝ խանգարուած բնագիրը վերականգնելով: Այս է Թ. Արծրունեայ¹⁰³ տեղիքը. «(Բանակը կը հասնի) յայնկոյս քան զՎանտոսայ, ի տեղւոջն արձանաշար քարակարկառ գոգաձեւ միջոցի երկուց բլրակաց, որ հայի յերկարաց Արկման Դաշտն, ի վերայ Լեգուայ գեաւղջն, որ գօրացն գեղեցիկ առասպելաբանն սպիանած վերայն սպանելոցն ի մանկանցն Շամիրա-

¹⁰² Հին Հայաստանի Կուլտուրան, էջ 190:
¹⁰³ Թուվալի Արծրունեայ Պատմութիւն, հրատ. Բ. Պ., Ս. Պետերբուրգ, 1887, էջ 215:

մայ»: Մ. Արեղեան¹⁰⁴ սրամտօրէն կը վերականգնէ այս աղճատուած կտորը. Պատկանեան «որ զօրացն գեղեցիկ» խօսքը փոխած էր արդէն «ուր զԱրայն Գեղեցիկ» ձեւին. «Այնուհետեւ, կ'ըսէ Մ. Արեղեան, 'սպիանած, բառը շատ պարզաբար կամ աշխարհաբարի ձեւով 'սպիացած, կամ աւելի 'սպիանալ, պէտք է կարդալ: Անհասկանալի 'վերայն, բառը 'վերացն, է, քանի որ վերքերը պէտք է սպիանան: Այսպէս բնագիրը կը ստանանք «Ուր զԱրայն գեղեցիկ առասպելաբանն՝ սպիանալ վերացն սպանելոցն ի մանկանցն Շամիրամայ: Մենք 'սպանելոցն, բառն եւս եղակի 'սպանելոցն, դարձրինք... մի անգամ որ 'զԱրայն, դարձած է 'զօրացն, ետեւից պիտի բերէր եւ 'սպանելոցն, յոգնակի թիւը»:

Ուստի եւ Արծրունեայ տեղիքէն սաչափը որոշ կ'իմանանք՝ թէ Լիգուայ գիւղին մէջ, «երկուց բլրակաց» տեղը, Շամիրամի գիւղերունընէն սպանուած Արայ Գեղեցիկ վերքերը կը սպիանան: Յարուսեան մասին հոս խօսք չ'ընէր Արծրունին. բայց տրամաբանական է ենթադրել, որ իր ժամանակի առասպելն այդ կարեւոր դէպքն ալ կը պատմէր, զոր ինքն իր անցողակի տեղեկատուութեան մէջ պէտք չունէր յիշել:

Լէգը գիւղն իր «երկուց բլրակաց» հետ թէ՛ լուսանկարուած եւ թէ՛ նկարագրուած կը գտնենք. «Արաքս»¹⁰⁵ հանդէսը կու տայ լուսանկար մը. նոյնպէս Lehmann-Haupt¹⁰⁶ եւ Լալայեան: Ամէնէն լաւը վերջինիս առածն է. այնպէս որ զայն զննելով — առանց վայրը տեսած ըլլալու — գիւրաւ կ'ըմբռնենք Թ. Արծրունեայ եւ նորագոյն ազգագիր-տեղագիրներու նկարագրած Լէգըն ու իր երկու բլրակները:

Բարերախտաբար մեր ազգագիրները շատ անգամ առիթ ունեցած են Լէգի գիւղով զբաղելու եւ անոր Ամենափրկիչ մատրան

¹⁰⁴ Հայ ժող. Առասպելը, էջ 529—530. Մատիկեան, Արայ Գեղեցիկ, էջ 70:
¹⁰⁵ Արաքս, Ս. Պետերբուրգ, 1897, Գիրք Բ., Եօթներորդ տարի, էջ 25:
¹⁰⁶ Armenien einst und jetzt, 2. Bd., I. Hälfte, Berlin-Leipzig 1926, էջ 188: Ձեռ գիտեր թէ մեծանուն հայագէտն ինչ փաստ ունի Լէգի գիւղն ու ժայռը «Aralesk» անուանելու: Երկու անգամ կը գործածէ «Արալէգը» անունը գիւղն ու ժայռը նշանակելով, եւ կը համարի զայն Արայի յարութեան վայրն ըլլալ: «Aralesk (ist die Stätte), an der Semiramis, wie die volksetymologische Sage erzählt, ihren Geliebten Ara durch leidenschaftliche Küsse vom Tode erweckt haben soll.»
¹⁰⁷ Ազգ. Հանդ., XXV, էջ 24:

ուխտատեղոյն վրայ խօսելու: Անցած դարու յիսնական թուականներուն, Ուրիմեան Հայրիկ¹⁰⁸ կը գրէ, «Լէգը» կամ «Լիգոյ» Գիւղ տիրողոսով. «Այս գիւղիս անունն՝ գիրքն եւ միջի կանգնած բարձրաւանդակ ապառաժն, ազգային հին պատմագրաց խօսուածքին հետը բաղդատելով՝ ասկէց 3600 տարի յառաջ պատահած ազգային մեծ յեղափոխութեան մը ճշգրիտ պատկերն... կը պատկերացնէ, որ այն մեծագործ Շամիրամ թագուհւոյն կանգնած արալէզ կուց պատուանդան եղած հսկայաձեւ քարաժայռին վրայ գիւտես թէ որոշակի կերպով կը կարդացուի: ... Չարմանալու բաներ են այն սանդղաձեւ տաշտաձեւքները՝ որ ապառաժի անհասարուցութիւնը կողկել տալով՝ ձեւի մոցուցեր է (Շամիրամի կողկել տալով)՝ ձեւի մոցուցեր է (Շամիրամ): Նաեւ ապառաժի վերին ծայրէն վեց միւրամ, որոյ զոմն ի հոմանեացն զԱրայ կարծեցուցեալ՝ լուր եհան եթէ զիք լիգեալ ողջացուցեալ են. եւ յայնմանէ, ասեն, մնաց անուն գեղջն Լէգը»:

Հմայեակ Նարեկեանի¹¹¹ «Յարալէզ» գրութիւնը, որուն մասին արդէն խօսեցայ, թէ եւ ինձի անհարազատ եւ յերկրածոյ ըլլալ կը թուի, բայց հարկ կը համարիմ անկից քանի մը հատուած հոս ներկայացնել. վասն զի մը վկայութեան համաձայն¹¹² ժողովրդեան իր վկայութեան համաձայն՝ «Բուն ուսմիկ եւ միաբերնէն քաղած է զայն. «Բուն ուսմիկ եւ միաբերնէն ժողովուրդի բերնէն առած եմ այդ... միա ժողովուրդի բերնէն առած եմ այդ... աւանդութիւնը», կը հաւատայ մեզի: Ուստի միայն վերապահօրէն ընդունինք Լէգի եւ աւանդութեան վրայ իր հաղորդած հետեւեալ տարբերակները. «Այդ գիւղը իր քովը մինչեւ հիմա ունի դէպ ի վեր ցցուած բարձր միաբերնէն ժայռ մը: Նայէ՛ դէպ ի հիւսիսը, կը տեսնես Լէգի (Լէգը), կը տեսնես Յարալէզ աստուածին սոսկալիթիսար ու երկար քարէ արձանը, որ հիմակուան ժայռին վրայ տընկուած... պատգամներ կ'որոտայ: ... Յարալէզը, (է) բժիշկ աստուածը, ան որ մեռելները լիգելով կ'ողջնցնէ: Հոն Ամենաբուժիններն տակն է որ, ամենահին աւանդութեան մը համեմատ, Ասորեստանի վաւաչոտ Շամիրամը տարաւ նետեց մեր գեղեցիկ Նահապետին մարմինը: Յարալէզը լից, լից, մինչեւ որ Արա չարժեցաւ:

Նման նկարագրութիւն մը տուած է նաեւ Գ. Սրուանձտեանց¹⁰⁹, բայց միայն համառօտ գծերով. «Լէգը իւր անունով եւ հին պատմութեամբ յայտնի է. ուր Շամիրամի աստուածները մեր Արայ գեղեցիկն մեռած մարմինը լիգել ու կենդանացուցեր են եղեր. եւ Արայլէզը անունով կուռք ու աստուած շինեցին պաշտեցին այն ժամանակ հայեր այս

գեղի բարձր գագաթին վրայ, ուր այժմ Ամենափրկիչի մատուռն է. եւ Աշխարհամատրան կիրակին մեծածոցով ուխտի կ'երթան: Ուր բեւեռագիրերով քարեր լցուն են. ու ձուլածոյ հին պղնձէ կենդանեաց փոքրիկ արձաններ գտնուեցան մեր օրերը դեռ եւս քանի մը տարի յառաջ»: Վստահ եմ, որ եթէ բանիմաց մասնագէտներու ձեռքով Լէգի մէջ կատարուած ըլլային պեղումներ, շատ կէտերու մէջ պիտի լուսարանուէր նաեւ արալէզներու հարցը:

Հ. Ն. Սարգիսեան¹¹⁰ ալ զանց չէ ըրած քանի մը տող նուիրել մեր ուսումնասիրութեան առարկայ գիւղին. «Վերոյ քան զԱւանա, կ'ըսէ, է գիւղս փոքրիկ (Լէգը), գորմէ ասի յոմանց տեղի լինել անկմանն Արայի ի Շամիրամայ, որոյ զոմն ի հոմանեացն զԱրայ կարծեցուցեալ՝ լուր եհան եթէ զիք լիգեալ ողջացուցեալ են. եւ յայնմանէ, ասեն, մնաց անուն գեղջն Լէգը»:

Հմայեակ Նարեկեանի¹¹¹ «Յարալէզ» գրութիւնը, որուն մասին արդէն խօսեցայ, թէ եւ ինձի անհարազատ եւ յերկրածոյ ըլլալ կը թուի, բայց հարկ կը համարիմ անկից քանի մը հատուած հոս ներկայացնել. վասն զի մը վկայութեան համաձայն¹¹² ժողովրդեան իր վկայութեան համաձայն՝ «Բուն ուսմիկ եւ միաբերնէն քաղած է զայն. «Բուն ուսմիկ եւ միաբերնէն ժողովուրդի բերնէն առած եմ այդ... միա ժողովուրդի բերնէն առած եմ այդ... աւանդութիւնը», կը հաւատայ մեզի: Ուստի միայն վերապահօրէն ընդունինք Լէգի եւ աւանդութեան վրայ իր հաղորդած հետեւեալ տարբերակները. «Այդ գիւղը իր քովը մինչեւ հիմա ունի դէպ ի վեր ցցուած բարձր միաբերնէն ժայռ մը: Նայէ՛ դէպ ի հիւսիսը, կը տեսնես Լէգի (Լէգը), կը տեսնես Յարալէզ աստուածին սոսկալիթիսար ու երկար քարէ արձանը, որ հիմակուան ժայռին վրայ տընկուած... պատգամներ կ'որոտայ: ... Յարալէզը, (է) բժիշկ աստուածը, ան որ մեռելները լիգելով կ'ողջնցնէ: Հոն Ամենաբուժիններն տակն է որ, ամենահին աւանդութեան մը համեմատ, Ասորեստանի վաւաչոտ Շամիրամը տարաւ նետեց մեր գեղեցիկ Նահապետին մարմինը: Յարալէզը լից, լից, մինչեւ որ Արա չարժեցաւ:

¹⁰⁹ Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ 1864, էջ 264—265:
¹¹⁰ Մաղիկ, անդ, էջ 553—555:
¹¹¹ Անդ, էջ 612:

տեղի ունեցած կը համարել «ի վերնաստանն ապարանից»։ Ուստի եւ կրնանք հաստատել, թէ հեթանոս հայը պատահարով չէ որ ընտրած է Լէզքի բարձրագիւր ժայռն իբր պաշտօնատեղի արալէզ աստուածներու։ Այդ լեռնաձեւ ժայռի վրայ կ'իյնար նորաձագ արեւուն առաջին եւ կենսախայտ ճառագայթը. ցորեկուան ընթացքին ո՛չ մէկ վայրկեան դուրկ կը մնար ժայռն արեւու կենսատու ջերմութենէն, եւ իրիկնադէմին, երբ շրջակայքի տարածութիւնը գիշերուան ստուերներով պարփակուէր, տակաւին բեկբեկ ու նուաղկոտ ճառագայթ մը կը դողար կենսատու շներու ժայռին գլխուն վրայ։ Արդ, հեթանոս հայը չէր կրնար չընտրել նոյն ժայռն իբր պաշտօնատեղի արալէզներու, քանի որ ան ամբողջ ցորեկուան ընթացքին արեւու աչքին եւ խնամքին ներքեւ կը մնար։ Հոս աւելորդ է՛ր լայր յիշել, թէ Կարբեղոնի մէջ Ասկլէպիոս¹¹⁷ տաճար մ'ունէր սեպ բարձունքի մը վրայ, ուր կարելի էր ելլել վաթսուն աստիճաններով սանդուխի մը միջնորդութեամբ։

Ինչպէս կը տեսնուի, արալէզներու քննութիւնը հոս մենագրութեան մը հանգամանքն առաւ. եւ թերեւս ընթերցողներէս ոմանք ասոր համար իրենց տհաճութիւնն յայտնեն, ըսելով թէ նիւթէս դուրս մեծ շեղում մ'ըրած ըլլամ։ Սակայն առանց մասնաւոր դիտարկութեան չէ, որ արալէզներու վրայ յատուկ ուշադրութեամբ աշխատեցայ։ Նախ որ Նիւթիկի ընձեռած հում նիւթն ուրիշ հեղինակներու պարունակած գրեթէ ամբողջ աստղածն ու տեսագծերը կը բովանդակէ. այնպէս որ եթէ գիցարան կրօնախոյզը երբեք արալէզներու հարցին մենագրութիւն մ'ուզէր նուիրել, ամէնէն առաջ Նիւթիկի հում նիւթը նկատողութեան պիտի առնէր։ Ահա ես ըրի այդ։ Երկրորդ, ես հարցը բոլորովին նոր տեսակէտներով ներկայացուցի. ուստի եւ ստիպուեցայ խնդիրն իր ամբողջ յարակից պարագաներով պարզել, որպէս զի պայծառ հասկացողութիւն մը ստանան արալէզներու հարցով զբաղողները։

Եթէ ամիսփիւլ ուզենք արալէզներու հարցին նուիրուած մեր քննութիւններուն արդիւնքը, հետեւեալները կ'ունենանք.

¹¹⁷ Baudissin, Der phönizische Gott Esmun, WZKM, LIX, 1905, էջ 176։

Արալէզ քառը կրնայ՝ ա. Արալի լիզող նշանակել եւ իբր այդպիսի չի կրնար սկզբնական բառ մ'ըլլալ։ Բ. Սկզբնական ձեւը կը համարիմ Լէզք, որուն կցուած է յետոյ Արա անունը։ Այդ սկզբնական Լէզք անունը պահուած է մինչեւ այսօր Վանի Լէզք գիւղին մէջ, որ արալէզներու պաշտամունքի կենդրոն եղած է՝ համաձայն դրական եւ ժողովրդական աւանդութիւններու եւ հաւատարմութիւններու։

«Յարալէզ» ձեւը չի կրնար հին ըլլալ։ Եզնիկի համեմատ «առլեզն ի շանէ» է, որուն մասին ժողովուրդը կը համարէր, թէ «ընդ աներեւոյթ դորութիւնս ինչ կեցցէ»։ Արալէզները պատերազմի մէջ ինկած վիրաւորները լիզելով կ'ողջնցնէին։

Ուրիշ մատենագիրներ ալ կը հաստատեն Եզնիկի ըսածները եւ նորանոր ճոխացումներ կ'ընձեռեն. վիրաւորուած գիւցազներն մարմինն աշտարակի մը տանիքը կը դրուի, կամ «ի վերնատունն»։ Արալէզները վերէն (երկրնքէն) հոն կ'իջնեն, մարմինը լիզելով ողջնցընելու եւ կենդանացնելու համար։ Հաւանաբար արալէզներու թիւը երկու էր. մին սեւ եւ միւսն սպիտակ։ Այդ սեւ եւ սպիտակ արալէզները կը յիշէ արդէն Վանական վարդապետ, իբրեւ Արտաւազդ թագաւորի երկու շները՝ «Սեաւ եւ Սպիտակ», որ յար լիզողուն գիւցազնս նորա»։

Արալէզներն իրենց էութեամբ բարի ոգիներ են, եւ սկզբնապէս մեռելները կենդանացնելու գերով աչքի կը զարնէին։ Այդ սկզբնական շրջանին անոնք արիւտ եւ լուսնոյ հետ կը նոյնանային որոնք համաշխարհային գիցարանութեան մէջ յատկապէս կեանքի եւ մահուան հետ կապ ունին։ Սպիտակ արալէզը¹¹⁸ կը ներկայացնէ արիւ-

¹¹⁸ Թերեւս այս հարցին հետ կապ ունի Սանատրուկի աւանդութիւնը, զոր Սորենացի կը յիշէ. «Նորահարչ սպիտակ շուն» մը ձիւնի տակ մնացած գայեակն ու մանուկը կը պահպանէ, աստուածներու զրդուձով։ Բնական է, առանց այդ սպիտակ շան միջամտութեան, պիտի մեռնէին երկուքն ալ։ Դէպքն այսպէս կը պատմէ Սորենացի. «Բայց թէ ընդէ՛ր Սանատրուկի կոչեցաւ, ասելի է։ Քանզի յաւուր ձեռնայնոյ ճանապարհորդեալ ի Հայս քոյր Արգարու Օդէ, պատահէ բոյ ի լերին Կորդուաց. ցրուեաց դամենեւն սեան մրբիկ, մինչ ոչ գիտելով ընկեր զընկեր՝ ընդ ո՛ր վարեցաւ։ Իսկ գայեակին նորա Սանատոյ... առեալ զմանուկն, քանզի տղա էր, եզ ի մէջ ստեանց իւրոց, մնալով ի ներքոյ ձեանն գերիս տիւս եւ գերիս գիշերս։ Չորմէ առասպելաբանեն, եթէ կենդանի իմն նորահարչ սպիտակ՝ յաստուածոցն առաքեալ պահէր զմանուկն։ Բայց որչափ եղաք վերահասու, այսպէս է. շուն սպիտակ ընդ խնդրական լեալ, պատահեաց մանկանն եւ գայեակին», Բ. ԼԶ։

կեանքը եւ իբր այդպիսի յարութիւն կու տայ. մինչ սեւ արալէզը մահ(մահիկ) լուսնի հետ կը նոյնանայ, մեռելի հոգին կը պաշտպանէ հոգեառներու դէմ, անոր առաջնորդ կ'ըլլայ դէպ ի մեռելներու աշխարհը։ Այս վերջին տեսակէտէն ծագած է անշուշտ այն հաւատարիքը, թէ շան ոռնոցը մօտալուստ մատարիքը, թէ շան ոռնոցը մօտալուստ մահուան մը նշան է։ Եւ ահա ասիկց այդ բարի ոգիներուն վրայ կու գայ չար տեսագիծ մը, որ թէեւ շատ տարածուած է, բայց սկզբնական շրջանի մը չի վերաբերիր։

Մեր արալէզները շատ հեղինակներու կողմանէ՝ օտար գիցարանութիւններու համապատասխան աստուածութիւններու հետ համեմատուած են։ Բասմաշեան¹¹⁹ զանոնք համեմատուած են հետ կ'ուզէ նոյնացնել Մարդուկի 4 շներուն հետ կ'ուզէ նոյնացնել եւ նոյն իսկ կը պնդէ, որ «Ասորբարբելացոց Մարդուկն իւր հետեւորդ շներով անցած է Հայոց»։ Կարծեկից չենք կրնար ըլլալ Բասմաշեանի։ Արալէզներու հաւատարմութիւնը ընդհանուր գծերով՝ բազմաթիւ ազդերու ստացուածք է. բայց իր մանրամասնութիւններուն մէջ դուրս հայկական է եւ իբր այդ՝ պէտք է գնահատուի։

Արդի հայ ժողովրդական աւանդութիւններն ալ կը պատմեն լիզելով յարութիւն եւ առողջութիւն պարգեւող շնաստուածներու մասին։ Այս աւանդութիւնը յատկապէս կապուած է Լէզք գիւղի Ամենափրկիչ մատրան հետ, որ նախապէս արալէզներու սրբալայր մըն էր, ուր վիրաւորուած եւ անկենդան մարմինները կը բերուէին, կենդանութիւն ստանալու յուսով։ Լէզքի աւանդութիւնը ստանալու յուսով։ Լէզքի արալէզներու թովմա Արծրունի կը պատմէ Արայի յարութեան դէպքով, իսկ արդի աւանդութիւնները թէ՛ Արայի յարութիւնն եւ թէ՛ այլ բազմաթիւ վերականգնացումներ կ'ընդունի։ Շունը թէ՛ բարի եւ թէ՛ չար տեսագծերով երեւան կու գայ. առաջին պարագային՝ կը տրամի, երբ հոգեառներու մերձեանքը տեսնէ մէկը մեռցնելու համար. իսկ երկրորդ պարագային՝ հոգեառներու ստտար կը հանդիսանայ, վասն զի իր ոռնոցը մահազուշակ եւ մահատիթ կը նկատուի։

Հ. Ա. ԳԱՐԱՄԱՆԵԱՆ

¹¹⁹ Համա. Իսկական Պատմութիւն Հայոց, Կ. Պոլիս 1914, էջ 81։

ԹՈՂՈՎՐԳՈՒԿԱՆ ՀԵՔԻՆԹՆԵՐ

ԲԻԱՍՍՈՒՆ ԳԻՌՈՒՆ ԵՒ ԹԱԿԱՒՈՒՐՈՒ ԱՅԶԻԿ¹

Կ'էնի՛ կ'էնի՛ մէ՛խատ թակաւո՛ր ըմ. էտա թակաւուրուն իսկի՛ լաճ տղայ չէ՛նե, մէնայ մէ՛խատ արիւնի՛ մ՛ կ'էնի՛։ էտու թակաւուրու նստած քիաղաք քիառսուն գիող կ'ինեն տիւս՝ ամիս տիր մ՛ կ'զանեն էտա քիաղքի վէրէն կ'թալնեն կ'տանեն։ Թակաւորն ըսկո՛ւմ կ'աղբիւրտանայ, ըսկո՛ւմ կ'իւրդճանայ՝ որ էլ խօսքով չէ՛նէ. կ'էնի՛ աւուր խացի կարօտ։ Օ՛ր ըմ թակաւուրու արիւնի կ'խտոցուցի ուր խօր կ'ասի։

— «Թակաւո՛ր պ ա պ ա, ա շ ի թ ի ս ի թ ե ս է լ ա ճ հ ը մ է ն թ ա կ ա լ ո ռ ն եր գ ա ն գ ի ն են, մ ե ն ք ի ն չ ի ՞ ը ն ն ա աղ ք ե տ են ք, մ եր թ ա կ աւ ու ռ ու թ ի ժ ո ղ ո Վ ու թ ի ն չ ի ՞ ը ս ը մ կ ի ն լ ս լ զ, կ ա ռ ո մ պ ի տ ի է ի ն ի . . . »։

— «Ա շ ի ՞ ը ս լ ի ո ս, կ'ասի թակաւոր ուր արիւնի, հը՛մէն երկրի թակաւորներն էլ գ ա ն գ ի ն են, մ ե ն ք է լ գ ա ն գ ի ն ի ն ք, ա պ ա Ա ս տ ա ճ ի ո ռ ճ ա յ չ մ ի տ ե մ ե, է լ խօսքով չէ՛նէ։ է՛ն ա տեղ, քիաղքից տիւս, յէ՛ր ըմ կայ, էն յէրի մէջ քիառսուն գիող կայ, հը՛մէն ամսուն կուգիւն մեր քիաղաք կ'թալնեն կ'տանեն։ Մըկա ժողովուրթ աղբիւրտացե, էլ գառ չի՛ մնացե որ մե էլ տայ, մենք էլ աղբիւրտացե ենք։ Թակաւոր ասածն ուր ժողովրթի վէրէն ի որ ժողովուրթ աղբիւրտ է ի ն ի ՞ թ ա կ ա լ ո ռ ն ի ն չ ի ս կ ա ն ա յ գ ա ն գ ի ն է ի ն . . . »։

— «Թակաւո՛ր ասրած կէնա՛ս, կ'ասի արիւնի. եոսունէլին արիւնի տո՛ւ՛ զիկ իմ կերպարանքի նման, քիառսուն ձեռք էլ խալա մէ՛յ ն մ ու շ է ի ն ի. քիառսուն խատ էլ ուղտ՝ հըմէնի վէրէն քիառսուն գանգիւղ է ի ն ի, ես էրթամ էն գիողերաց հախկէն գիւմ»։

Արիւնի ի՛նչիս որ կ'ասի՛ թակաւոր զը՛մէն էլ կ'պատրաստի։ Արիւնի՛ կ'ասի. «Զի՛ խամար մէ՛խատ էլ խօրօտ թո՛ւր ըմ շինել տուր»։ Խէր է՛ն էլ կ'անի։ Արիւնի՛ն ի, գանգիւղեր կ'կախի էտա քիառսուն ըղտերաց կառններ, եոսունէլին արիւնիներ կ'խէճուցի վէրի՛յտեր, արիւնիներաց կ'ասի.

— «Տիւք՝ էտա շիտայ ճամխից կնացէ՛ք մ ա գ ա ռ է ն ը ն ց է ք՝ է լ մ տ ա ո յ է ք. գ ա ն գ ը կ ն եր թ ո ղ զ ը յ ը դ ի ա ն՝ տ իւ ք հ ա՛ կ ն ա յ է՛ք

¹ Վանայ բարբառով։ Գրի տնտուած 1906 ին՝ ի վան։